ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՂՎԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.261

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են դպրոցում դեկորատիվ-կիրառական արվեստի ուսուցման առանձնահատկությունները, հոգեբանամանկավարժական պայմանները և այդ հիմքի վրա՝ ազգային ժողովրդական մշակույթի հետ հաղորդակցման գործընթացը: Այն առաջին հերթին պայմանավորված է անձի ներդաշնակ զարգացմանն ուղղված արդիական խնդիրներով, մարդասիրական դերի աճով և երիտասարդ սերնդի հնարավորությունների իրացման օբյեկտիվորեն ծագած անհրաժեշտությամբ:

Քանի որ յուրաքանչյուր սերունդ անցյալի և ապագայի միջև մշակույթի կրող այն օղակն է, որն ապահովում է հաջորդականության և ժառանգման շղթան, երկրորդ կարևոր հանգամանքը պայմանավորված է նաև մշակութային գործունեության ոլորտում ծագած կրթության և դաստիարակության ժամանակակից խնդիրներով:

Երրորդ՝ այն պայմանավորված է ժամանակակից անձի հոգեբանական առանձնահատկություններով և նրանց զարգացման ու ձևավորման գործընթացում առկա խնդիրներով:

Հոդվածի նպատակն է վեր հանել ժամանակակից գեղարվեստական կրթության հիմնախնդիրը՝ որպես գործիք օգտագործելով դեկորատիվ-կիրառական արվեստը: Հոդվածը կառուցված է համապատասխան գիտական ուսումնասիրությունների հիման վրա. ուսումնասիրվել է նախկինում

գոյություն ունեցող համակարգը, ինչպես նաև ներառվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, որտեղ հիմնականում կիրառվել է կերպարվեստային գործունեությունը:

Ժամանակակից կրթության մեջ ժողովրդական մշակույթը պետք է հասկանալ ոչ թե որպես վարքագծի և դատողությունների մեխանիկորեն վերարտադրվող, բացարձակ, անմարմին շերտ, այլ որպես դրանց անվերջ մեկնաբանությունների դինամիկ գործընթաց, որը վերստեղծվում է նոր դրսևորումներում և ըստ էության հարմարվում է կենսական նոր իրավիճակներին:

Այսպես, քանի որ հաղորդակցման մշակույթի զարգացումն ընթանում է անցյալից դեպի ներկա, հանրակրթական դպրոցում միշտ գոյություն ունեն կրթական չափորոշիչներ, որոնք ներկայացնում են արդիական վարքի բուն էությունը և իրենց հերթին դառնում են մշակույթի հետ հաղորդակցվելու գործառույթ:

Եվ քանի որ կյանքի ու իրողության պայմանները փոփոխվում են, ժողովրդական մշակույթն էլ իր տեղը զիջում է նորույթներին, որոնք նույնպես դառնում են առանձնահատուկ ավանդույթներ՝ շարունակելով մշակութային զարգացման ընթացքը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *դեկորատիվ արվեստ, կիրառական արվեստ, ժողովրդական արվեստ, մշակույթ, ազգային ավանդույթներ, ծեսեր, հաղորդակցություն, ինքնագիտակցություն, նախադպրոցական տարիք:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի պետական քաղաքականությունը, մի կողմից, նոր հնարավորություններ է ստեղծում իր տարածքում գտնվող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների ազգային ինքնագիտակցության զարգացման համար: Մյուս կողմից՝ այդ ուղին պարզ ու դյուրին չէ. այն իրականացնելիս ի հայտ են գալիս մի շարք մարտահրավերներ, որոնցից

առաջինը մշակութային մակարդակում է։

Մի կողմից՝ դասավանդման ավանդական համակարգում ժողովրդական դեկորատիվ-կիրառական արվեստի հետ ծանոթացումը հաճախ չի բացահայտում նրա ոգին, իմաստը և ակունքները, ինչպես նաև չի նպաստում նրա հիմքի վրա երևակայության ու գեղարվեստական ճաշակի ձևավորմանը, այլ հիմնականում սահմանափակվում է օրինակների պատճենմամբ և առանձին տարրերի մշակմամբ։

Չնայած ավանդույթներին նվիրված բազմաթիվ հրապարակումների առկայությանը, գիտական գրականության մեջ չկա դրանց միասնական, ընդունված սահմանում։ Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը դրանք զարգացել են՝ պայմանավորված ազգերի առանձնահատկություններով։

Հայ ժողովրդի ավանդույթներում և սովորույթներում մարմնավորվում է բարդ միասնություն, որտեղ արտացոլվում են ժողովրդական մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը, ժողովրդի կյանքի բարոյահոգեբանական կողմերը, կենցաղի առանձնահատկությունները և մարդկանց միջև փոխհարաբերությունների տարբեր դրսևորումները։ Ավանդույթները իրենց մեջ կրում են հայ ժողովրդի հոգևոր նկարագիրը, որը զգալիորեն ձևավորվում է դրանց ազդեցությամբ։

Յուրաքանչյուր սերունդ տարբերվում է ոչ միայն անցյալի նկատմամբ ունեցած իր պատկերացումներով և վերաբերմունքով, այլև պատմականորեն առաջադիր խնդիրներով և դրանց լուծման արդյունավետությամբ։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու գեղարվեստական կրթությունն ու դաստիարակությունը, նրա մեջ գեղեցիկի ու վեհի զգացողության զարգացումը մշտապես եղել են մանկավարժների և հետազոտողների ուշադրության կենտրոնում։

Ներդաշնակ և հոգեպես առողջ, հավասարակշիռ մարդու դաստիարակության գործում նշանակալի են եղել նաև ժողովրդական իմաստությունն ու ժողովրդական մանկավարժությունը։

Այսօր իրավիճակը բնութագրվում է հասարակության հոգևոր ճգնաժամով: Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի պահպանությունն ու զարգացումը առանցքային խնդիր է, քանի որ ժամանակակից հասարակության մեջ մշակութային ներդրումն ապահովում է անհատի հարմարվողականությունը արագ փոփոխվող պայմաններում:

Արդի մանկավարժության կարևոր ուղղություններից է երեխաների հոգում համամարդկային արժեքների՝ ճշմարիտ, բարու և գեղեցիկի յուրացման ձևավորումը: Սա ուղղված է մանկավարժության հիմնական նպատակին՝ «ապագա մարդու» դաստիարակությանը:

Այս համատեքստում գեղարվեստական դաստիարակությունը համարվում է գործոն, որը ձևավորում է մարդու գործունեությունը գեղարվեստական միջոցների որոնման ուղղությամբ:

Մ.Ս. Կագանի դիտարկումները դեկորատիվ-կիրառական արվեստի մասին հետաքրքիր են այս առումով: Նա ընդգծում է, որ արվեստի որոշ ձևեր, օրինակ՝ մետաղի կամ փայտի գեղարվեստական մշակումը, կարելի է դիտարկել որպես գծանկարչության տեսակ, իսկ փափուկ խաղալիքների պատրաստումը՝ որպես կերպարվեստային ստեղծագործության առանձին ձև: Կիրառական արվեստը, ձեռագրային զարդանկարչությունը և դիզայնը Կագանի դիտարկումներում նույնպես առանձին ենթատեսակներ են **(Կագան Մ., 1972):**

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ազգային արվեստը իր գոյության ընթացքում պահպանել է բազմազանությունը և դարձել է «խաչմերուկ», որտեղ հանդիպում են կենցաղային և գեղարվեստական պահանջմունքները, աշխատանքը, խաղը, սովորույթները, խմբային ներկայացումները և անհատական ստեղծագործական ձգտումները, առօրեականությունը և տոները, ինչպես նաև աշխարհի գեղարվեստական ընկալման տարբեր ձևերը:

Աշխարհի գեղարվեստական ընկալման առաջին ձևերը նախնական համընդհանուր արվեստում եղել են առասպելներն ու լեգենդները, այնուհետև

կրոնական հայացքները: Սակայն այս կարևոր առանձնահատկությունները հաճախ դուրս են մնում հանրակրթական դպրոցների դասավանդման ուշադրության կենտրոնից: Արվեստի ընկալման մեջ առաջնայինը ոչ միայն այն է, ինչ արտահայտված է, այլև թե ինչպես է արտահայտված (**Գումիլյով Լ., 1998**):

Ժողովրդական աշխարհայացքը՝ իր գաղափարների, սովորույթների, հայացքների ու համոզմունքների համակարգով, հոգեբանությամբ, բարոյականությամբ և մշակութային կանոններով, ազգային ավանդույթի էական մասն է: Դրա անտեսումը գեղարվեստական դաստիարակությունը դարձնում է ձևական և անարդյունավետ: Ազգային մշակույթը ներդաշնակ է ազգային բնավորության հետ և արտահայտում է այն գեղարվեստական ձևով՝ հոգեբանորեն համարժեք:

Ազգային մշակույթին հաղորդակցվելն առաջնայնորեն նշանակում է շփում վարքի որոշակի կաղապարատիպերի հետ, իսկ ազգային արվեստը գործընթացում ապահովում է երկու գործառույթ՝ տեղեկատվական և գեղագիտական, որոնք պետք է համընթաց դիտարկվեն (**Գումիլյով Լ., 1998**):

Ազգային արվեստի և կյանքի կապը դաստիարակության մեջ արտացոլվում է «ոչ այնքան արվեստի լավագույն ստեղծագործությունների հիացմունքի», որքան կյանքի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքի ձևավորմամբ: Ուսանողը պետք է սովորի գեղեցիկը տեսնել ոչ միայն արվեստում, այլ նաև կյանքում, մարդկային հարաբերություններում և առօրյայում (**Բակուշինսկի Ա., 1925**):

Ժողովրդական արվեստը կարևոր աջակցություն է, քանի որ այն ամբողջական է, կյանքից անբաժանելի և նպաստում է արժեքների յուրացմանը: Գեղարվեստական մտածողության և մշակութային ընկալման ձևավորումից ծնվել է հին աշխարհի մարդուն բնորոշ գեղարվեստական գործունեությունը, որն այսօր ևս հանդիսանում է գեղարվեստական ստեղծագործության հիմքը:

Նոր ժամանակներում նկատելի է ազգային մշակույթի ստեղծման միտում՝ հիմնված ժողովրդական մշակույթի անցյալում, սակայն միայն ավանդական

արհեստների և սովորույթների կրկնօրինակումը կարող է դառնալ ազգային զարգացման փակուղի:

Վերլուծելով տարբեր հետազոտողների ուսումնասիրություններն ազգային ավանդույթների, պաշտամունքների ու ծեսերի մասին՝ կարելի է եզրահանգել, որ դրանք հիմնականում համախմբվում են չորս գլխավոր պաշտամունքների շուրջ: Ազգագրական արդի հետազոտություններում այդ պաշտամունքները հաճախ նշվում են «պաշտամունքի ավանդույթներ» կամ «առաջադիմական ավանդույթներ» անվամբ: Պաշտամունքային ավանդույթների ձևափոխության պատճառը ակնհայտորեն մանկավարժական համակարգի երկարատև ազդեցության տակ ժողովրդական կյանքի դիցաբանական, մոգական և կրոնական սկզբունքների փոփոխությունն էր: Նշված պաշտամունքների միջև թեև որոշ տարբերություններ կան, դրանք էական չեն (**Կերգիլովա Ե., 1999**):

Ե. Ն. Կերգիլովան առանձնացնում է երեխաների, ծնողների, հարազատների, ցեղի և նախնիների պաշտամունքի ավանդույթները, ինչպես նաև օջախի, բնության և շրջապատող աշխարհի պաշտամունքը, որոնք բնորոշվում են որպես «առավել կարևոր արժեքներ դպրոցական տարիքի սովորողների դաստիարակության գործում» (**Կերգիլովա Ե., 1999**):

Սակայն այս համակարգում առանձնացված, առանձնահատուկ պաշտամունք է գեղեցիկին խոնարհումը: Այն գոյություն ունի յուրաքանչյուր ժողովրդի ավանդույթների համակարգում և ձևավորում է հասարակությունների մեջ ընդհանուր ընկալում, ինչպիսին է ժողովրդական արվեստը: Գեղեցիկը ոչ միայն գեղագիտական ընկալում է, այլև կատարում է հոգևոր վերնաշենքի ֆունկցիա գոյության պայքարում, վերապրումում և կենսապահովման գործընթացներում (**Բրոմլեյ Յու., 1973**):

Լ. Ն. Գումիլյովի ձևակերպմամբ, գործնական ունակության կարևոր տարբերակներից մեկը «համակարգաստեղծ» կապն է: Գեղեցկության պաշտամունքը գեղեցիկի ընտրության հուսալի չափանիշ է, որն ամրագրում է ազգային ինքնագիտակցությունը՝ նշելով անհատի տեղն ու պատկանելությունը

հասարակական-ազգային հարաբերությունների համակարգում (**Բրոմլեյ Յու., 1973**):

Յու. Վ. Բրոմլեյն առանձնացնում է ազգային ինքնագիտակցության բաղկացուցիչներ, որոնք ներառում են էթնոնիմի առկայությունը և օգտագործումը՝ ազգության անվանումը: Սակայն ազգային պատկանելության գիտակցումը ոչ միայն լեզվական կամ կրոնական հարց է, այլ առավելապես վերաբերում է ազգային մշակույթի և հատկանիշների ընկալմանը:

Սովորական գիտակցությունը, ի տարբերություն գիտական մոտեցման, ի զորու չէ ամբողջությամբ առանձնացնել սեփական ազգի մշակույթի բոլոր առանձնահատկությունները, ինչպես նաև օտար մշակույթների ազդեցությունը (**Էթնոհոգեբանական բառարան, 1999**): Այս իրավիճակից բխում է ազգային ինքնագիտակցության տարբերակված և նպատակաուղղված ձևավորման անհրաժեշտությունը, հատկապես դպրոցական դաստիարակության համատեքստում:

Ազգային ինքնագիտակցության և մանկական գեղարվեստական դաստիարակության հիմնական չափանիշը նախադպրոցական տարիքում հանդիսանում է մանկան սեփական ժողովրդի ավանդույթների ընկալումն ու յուրացումը կենսակերպի մակարդակում: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ազգային մշակույթի հիմունքների յուրացման ամենանպաստավոր ժամանակահատվածը հենց նախադպրոցական հասակն է:

Դպրոց հաճախելուց առաջ երեխայի մոտ պետք է ձևավորված լինի սեփական ազգային պատկանելիության պատկերացում, որը ձևավորվում է ազգային մշակույթի հաղորդակցության միջոցով՝ ավանդույթներ, կենցաղային առանձնահատկություններ, բանահյուսություն: Այս տարիքում երեխան դեռևս ընկալունակ է ժողովրդական արվեստի նկատմամբ, քանի որ այն հասանելի է պատկերավորությամբ, հակիրճությամբ և ավանդականությամբ:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի պատկերացումների շրջանակը ընդլայնվում է ոչ ինքնանպատակ, այլ համեմատական ուսուցման միջոցով՝

սեփական մշակույթը ճանաչելու համար մեկ այլ ժողովրդի մշակույթի համեմատությամբ: Սեփական ինքնությունը գիտակցվում է այն ժամանակ, երբ երեխան տեսնում է, թե ինչպես է տարբերվում շրջապատող մարդկանցից: Այս փուլում երեխան դեռևս չի կարող ճանաչել յուրաքանչյուր ժողովրդի ինքնակեցությունը, քանի որ նրա կյանքը կենտրոնացած է հիմնականում մեկ ժողովրդի մշակույթի շրջանակներում՝ մեկ ընտանիքի, մեկ ցեղի: Դպրոցը ներկայացնում է նոր հասարակական միջավայր, որտեղ նա պետք է սովորի ընդունել, հասկանալ և ճանաչել ուրիշ մշակույթները:

Միջին դպրոցական տարիքին կարևոր է միջազգային հաղորդակցության մշակույթի ձևավորումը, քանի որ այդ տարիքում գերիշխող գործունեությունը հաղորդակցությունն է: Այս փուլում գեղարվեստական դաստիարակության նշանակությունը աստիճանաբար նվազում է, մինչդեռ նախորդ փուլերում այն գերակշռող էր: Այստեղ լավագույն միջոցներն են ուրիշ ժողովուրդների մշակույթների ճանաչումը երգերի, կենցաղային առարկաների, հագուստի և այլ գեղեցիկ ստեղծագործությունների միջոցով:

Դեռահասային տարիքում պատանեկան գիտակցությունը խորանում է, արվեստի ճանաչումը բաժանվում է տարբեր ժանրերի՝ կերպարվեստ, գրականություն, երաժշտություն և այլն: Այս փուլը բարենպաստ է ոչ միայն խորհրդանշական դիցաբանական կերպարների յուրացման, այլև իրականության իրատեսական ընկալման համար՝ հիմք ձևավորելով սեփական իրականության պատկերման:

Այսպիսով, ձևավորվում է փուլային մանկավարժական մոտեցում. նախադպրոցական տարիքում երեխան հաղորդակցվում է իր ժողովրդի մշակույթին, կրտսեր դպրոցական տարիքում՝ նաև ուրիշ ժողովուրդների ավանդույթներին, իսկ դեռահասային տարիքում կարող է արդեն քննադատորեն ընկալել ժամանակակից մշակույթը: Այս մոտեցումը թույլ է տալիս դպրոցականին պատրաստվել ապագային՝ ապահովելով անցյալի մշակութային արժեքների ճանաչում, ներկայի ճիշտ ընկալում և ապագայի

մշակութային զարգացումն ապահովող հիմքի ստեղծում: Դպրոցական տարիքում ձևավորվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է յուրաքանչյուր երեխայի ապագա մշակույթը՝ համադրելով ազգային և համամարդկային արժեքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալին, որ հասարակության, անցյալի հասարակական հիշողության նյութական և հոգևոր մշակույթի կարևոր բաղկացուցիչ մաս հանդիսանալով՝ դեկորատիվ կիրառական արվեստը սովորողների գեղարվեստական դաստիարակության ծրագրերի օրգանական բաղկացուցիչ դարձավ; Սակայն դեկորատիվ արվեստի ուսումնասիրության առավելագույն ժամկետները, նրա դերն ու տեղը գեղարվեստական դաստիարակության գործընթացում մինչև այս պահը չեն հաստատվել: Մեր հետազոտության մեջ ցույց է տրվում, որ ժողովրդական արհեստագործության և արվեստների ուսումնասիրությունն ամենից առաջ նպաստում է դպրոցական տարիքի սովորողների գեղարվեստական դաստիարակության զարգացմանը: Սակայն ազգային մշակույթի յուրացման միջոցով այն ծառայում է միայն երկու պայմանների ինտեգրացման պայմաններում.

1. եթե «ժողովրդական մշակույթին» հաղորդակցվելու գործընթացը տեղի է ունենում նախադպրոցական տարիքից սկսած,

2. դպրոցական տարիքի սովորողների համար անհրաժեշտ է ժողովրդական արվեստի բոլոր ձևերի համադրությունը համալիր հիմքով:

Մեր կարծիքով ազգային մշակույթի ուսումնասիրման գործընթացում գեղարվեստական դաստիարակության նկատմամբ նման մոտեցման իրականացումը պահանջում է հատուկ կազմակերպչական պայմաններ և մասնագետների նպատակաուղղված նախապատրաստում: Անշուշտ, հանրակրթական դպրոցի կրտսեր դասարաններում գեղարվեստական դաստիարակություն իրականացնող ուսուցչի նախապատրաստման հիմքը

պետք է լինի ոչ միայն տուսրիքայի ու մանկավարժական հոգեբանության, այլև գեղարվեստական ստեղծագործական գործունեության հոգեբանության և մանկավարժության դասընթացն ամենաբարձր մակարդակով: Այս առումով ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը կարևորվում է դեկորատիվ կիրառական արվեստի դաստիարակչական ներուժով, որը համարվում է հարազատ ժողովրդի մշակույթին հաղորդակցվելու բացառիկ միջոց: Գեղարվեստական դաստիարակության ժամանակակից տեսության ոլորտում այդ գործընթացի կազմակերպման արդյունավետ պայմանների որոնումն ընթանում է դպրոցականի՝ արվեստի տարբեր ձևերի հետ հաղորդակցվելու ուղղությամբ: Այդ խնդիրը կարող է լուծվել կրթության և դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցման դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бакушинский А. (1925)**, Художественное образование: Опыт исследований на основе пространственных искусств, Москва, “Невая”.
2. **Бромлей Ю. (1973)**, Этно-этнография, Москва, “Наука”.
3. **Гумилёв Л. (1998)**, От Руси до России, Москва, “Сварог и К”.
4. **Каган М. (1972)**, Morfologiya iskusstva: Istoricheskoye i teoreticheskoye issledovaniye vnutrenney struktury khudozhestvennogo mira /Морфология искусства: Историческое и теоретическое исследование внутренней структуры художественного мира/, Части I–III. Ленинград, “Искусство”.
5. **Этнопсихологический словарь (1999)**, Под ред. Волковой Г., Москва, Институт практической и социальной психологии.

REFERENCES

1. **Bakushinsky A. (1925)**, Khudozhestvennoye obrazovaniye: Opyt issledovaniy na osnove prostranstvennykh iskusstv /Art Education: Research Experience Based on Spatial Arts/, Moscow, “Nevaya”.

2. **Bromley Yu. (1973)**, Etno-etnografiya /Ethno-Ethnography/, Moscow, “Nauka”.
3. **Gumilev L. (1998)**, Ot Rusi do Rossii /From Rus to Russia/, Moscow, “Svarog and K”.
4. **Kagan M. (1972)**, Morphology of Art: Historical and Theoretical Study of the Internal Structure of the Artistic World, Parts I–III. Leningrad, “Iskusstvo”.
5. **Etnopsikhologicheskiy slovar' /Ethnopsychological Dictionary/ (1999)**, ed. by Volkova G., Moscow, Institute of Practical and Social Psychology.

Агван Мхитарян

Особенности общения с национальной популярной культурой в общебразовательной школе.

Заключение

Ключевые слова и выражения: *декоративное искусство, прикладное искусство, народное искусство, культура, национальное, традиции, обряды, коммуникация, самосознание, дошкольный возраст*

В современном образовании народную культуру не следует понимать как механически воспроизводимый, абсолютный или нематериальный набор поведений и оценок. Напротив, это динамический процесс, который постоянно интерпретируется, воспроизводится в новых проявлениях и адаптируется к изменяющимся жизненным ситуациям.

Поскольку развитие культуры коммуникации идет от прошлого к настоящему, образовательные стандарты в школах общего образования служат как отражением современного поведения, так и средством взаимодействия с культурой. По мере изменения условий жизни и реальности народная культура адаптируется, порождая новшества, которые, в свою очередь, становятся характерными традициями и продолжают процесс культурного развития.

В данной статье рассматриваются особенности преподавания декоративного

и прикладного искусства в школе с учетом психолого-педагогических условий и роли взаимодействия с национальной народной культурой. Исследование охватывает:

1. Деятельность и психологические особенности учащихся;
2. Существующие проблемы в их развитии и формировании;
3. Использование современных инструментов художественного образования, включая декоративно-прикладное искусство.

Цель статьи — подчеркнуть роль декоративного и прикладного искусства как инструмента современного художественного образования. Исследование опирается на предыдущие научные работы и включает современные информационные технологии, уделяя внимание художественной деятельности, способствующей как культурному пониманию, так и творческому развитию.

Aghvan Mkhitaryan

Features of communicatioan with national popular culture in general education school

Conclusion

Key words and expressions decorative art, applied *art, folk art, culture, national, traditions, rituals, communication, self-awareness, preschool age.*

In modern education, folk culture should not be understood as a mechanically reproduced, absolute, or intangible set of behaviors and judgments. Rather, it is a dynamic process, continuously interpreted, recreated in new manifestations, and adapted to evolving life situations.

Since the development of communication culture progresses from the past to the present, educational standards in general education schools serve as both a reflection of contemporary behavior and a means of interacting with culture. As life conditions and

realities change, folk culture adapts, giving rise to innovations that, in turn, become distinctive traditions, continuing the process of cultural development.

This article discusses the peculiarities of teaching decorative and applied art in schools, considering psycho-pedagogical conditions and the role of communication with national folk culture. It examines:

1. Activities and psychological characteristics of students;
2. Existing challenges in their development and formation;
3. The use of modern art education tools, including decorative and applied art.

The purpose of the article is to highlight the role of decorative and applied art as a tool for modern art education. The study builds on prior research while incorporating modern information technologies, focusing on art activities that facilitate both cultural understanding and creative development.

Աղվան Մխիթարյան - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական Կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ արվեստի պատմություն, կերպարվեստի դասավանդման մեթոդիկա, անտիկ շրջանի համաշխարհային արվեստ: Հեղինակ է շուրջ 15 գիտական հոդվածի և երկու մեթոդական ձեռնարկի: mkhitaryanaghvan22@aspu.am

Агван Мхитарян - Доцент кафедры «Искусство» факультета изобразительного образования Армянского государственного университета имени Хачатура Абовяна. Научные интересы: история искусства, методика преподавания изобразительного искусства, мировое искусство античности. Автор около 15 статей и двух методических пособий.mkhitaryanaghvan22@aspu.am

Aghvan Mkhitaryan - Associate Professor of the “PERFORMANCE” Department at the Faculty of Fine Arts Education, Khachatur Abovyan Armenian State University. Scientific interests: art history, fine arts teaching methodology, ancient world art. Author

of about 15 scholarly articles and two methodological manuals. mkhitaryanaghvan22@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 03.03.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 18.03.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.